ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տելեկոմ Արմենիա» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան 0014, Ազատության պող.24/1,
Հեռ.՝ (+37410) 410410
էլ. փոստ՝ info@telecomarmenia.am
Հաշվետվություն թիվ 2, 31.03.2024

Ստորև ներկայացվում են դատական գործերի վերաբերյալ էական փոփոխությունները 31.03.2024թ. դրությամբ.

1. Թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.05.2023թ. վճռի դեմ վարչական գործով պատասխանող՝ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, երրորդ անձինք՝ «ԹԻՄ» ՓԲԸ, Հայկ Հովիկի Եսայանը, Ալեքսանդր Հովիկի Եսայանը ներկայացրել են վերաքննիչ բողոքներ:

   ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը 29.01.2024 թվականի որոշմամբ վարչական գործով պատասխանող ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, ինչպես նաև երրորդ անձինք «Թիմ» փակ բաժնետիրական ընկերության, Հայկ Հովիկի Եսայանի, Ալեքսանդր Հովիկի Եսայանի ներկայացրած վերաքննիչ բողոքները բավարարել է մասնակիորեն՝ թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.05.2023թ. կայացված վճիռը՝ Հայկ Եսայանի և Ալեքսանդր Եսայանի կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ընկերության բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղված գործողությունները որպես չբացահայտված տեղեկատվության օգտագործմամբ և ֆիդուցիար պարտավորությունների խախտման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն որակելուն պատասխանողին պարտավորեցնելու մասին հայցը բավարարելու և դրա հետ կապված դատական ծախսերը բաշխելու մասով, բեկանել է:
   ՀՀ վարչական դատարանի 11.05.2023թ. թիվ ՎԴ/0693/05/21 վարչական գործով կայացրած վճիռը՝ «Թիմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ընկերության բաժնետոմսերի ձեռքբերմանն ուղղված գործողությունները որպես չբացահայտված տեղեկատվության օգտագործմամբ և ֆիդուցիար պարտավորությունների խախտման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն որակելուն պատասխանողին պարտավորեցնելու մասին հայցը բավարարելու և դրա հետ կապված դատական ծախսերը բաշխելու բողոքարկված ու չբեկանված մնացած մասով, թողել է անփոփոխ:
   Նույն վարչական գործով պատասխանող՝ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, երրորդ անձինք՝ «ԹԻՄ» ՓԲԸ, Հայկ Հովիկի Եսայանը, Ալեքսանդր Հովիկի Եսայանը 29.02.2024թ. ներկայացրել են վճռաբեկ բողոքներ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.01.2024թ. որոշման անբարենպաստ մասի դեմ:

2. Թիվ ՎԴ/6727/05/20 վարչական գործով հայցվոր «Յուքոմ» ՓԲԸ կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.12.2023թ. որոշմամբ ամբողջությամբ մերժվել է:

   ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.12.2023թ. որոշման դեմ «Յուքոմ» ՓԲԸ 20.01.2024թ. ներկայացրել է վճռաբեկ բողոք:
   ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատը 21.02.2024թ. որոշմամբ «Յուքոմ» ՓԲԸ վճռաբեկ բողոքը վերադարձել է:
   «Յուքոմ» ՓԲԸ 11.03.2024թ.կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք:

ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ ԲԲԸ-ն 13/02/2024 թվականին ձեռք է բերել "ԵՍ ԵՄ" ՓԲԸ կանոնադրական կապիտալի 8.33 % ը կազմող քվեարկող հասարակ անվանական բաժնետոմսերը